ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
22.07.2021Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են *Կ.Դավթյանը, Մ.Գասպարյանը, Ա. Փանոսյանը , Պ.Մնացականյան, Տ.Եփրեմյան:*

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝

1. ***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ ծրագրին Չարենցավան խոշորացված համայնքի մասնակցության մասին:***
2. ***Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմում ավագանու անդամ ընդգրկելու մասին:***

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ - 9 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ ծրագրին Չարենցավան խոշորացված համայնքի մասնակցության մասին:***

/Զեկ. Ա.Ծերունյան/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 13-րդ հոդվածի 10-րդ 42-րդ կետը.***առաջարկում եմ.***

1. Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ԼՖ ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով՝ Չարենցավան խոշորացված համայնքի «Վերածնունդ» հուշահամալիրի և հարակից՝ «Գանգրահեր տղա» զբոսայգու վերակառուցում:
2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում՝ ՍՆՏԶ ծրագրի պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում;
4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ;
5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Վարդանյան Նորիկ

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմում ավագանու անդամ ընդգրկելու մասին:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 42-րդ կետը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն համանի 7–րդ կետը, ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ստեղծվող մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկել Չարենցավան համայնքի ավագանու անդամ ***Անատոլի Գասպարյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9	դեմ-0	ձեռնպահ-0
Բաբայան Նարեկ		
Բաբայան Վալերի		
Գասպարյան Անատոլի		
Գրիգորյան Հակոբ		
Երիցյան Գագիկ		
Խլղաթյան Արսեն		
Վարդանյան Նորայր		
Վարդանյան Նորիկ		
Վարդանյան Սարգիս		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____